

ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

Eusebius Kirchengeschichte, BUCH VI und VII, aus dem armenischen übersetzt von Erwin Preuschen. Leipzig, 1902. (Եւսեբիոս, Եկեղեցական Պատմութիւնն, գերը VI և VII: Հայերէնից Թարգմանեց Երվին Պրօյշէն. Լայազցիդ, 1902).

Եւսեբիոսի «Եկեղեցական պատմութիւնն», քրիստոնէութեան պատմութեան հին շրջանի այդ կարևորագոյն աղբիւրը, ինչպէս յայտնի է, հայերէնի է թարգմանուել արդէն Ե. գարում: Թարգմանութիւնը կատարուել է ոչ թէ բնագրից, յունարէնից, այլ ասորերէն փոխադրութիւնից: Հայերէն թարգմանութիւնը հրատարակուել է 1877 թ.-ին Վենետիկում, հայր Ճարեանի ձեռքով:

Եւսեբիոսի Եկեղ. պատմութեան ասորերէն թարգմանութեան մէջ պակասում են Զ. և Է. գրքերը, որոնք սակայն պահուած են հայերէն թարգմանութեան մէջ: Աւստի և այդ գրքերի հայերէն թարգմանութիւնը ամբողջացնել կարող է ասորական թարգմանութիւնը: Պրոֆ. Նեստլէն արդէն ասորերէնից գերմաներէնի է թարգմանել Եւսեբիոսի Եկեղ. պատմութիւնը: Նրա մէջ պակասող Զ. և Է. գրքերի հայերէնից գերմաներէնի թարգմանելը Պրօյշէնի ձեռքով լրացումն է Նեստլէի աշխատութեան: Այս գիտումով էլ գործի է ձեռնարկել Պրօյշէն, մէկն այն գերմանացի աստուածաբաններից, որոնք հայերէն ևս ուսումնասիրում են իրենց գիտական աշխատութիւնների համար:

Թարգմանիչն իր գրքին կցել է յառաջաբան և ներածութիւն: Ներածութեան մէջ խօսում է նա համառօտակի Եւսեբիոսի Եկեղ. պատմութեան հայերէն թարգմանութեան ձեռագրների և հրատարակութեան՝ այդ թարգմանութեան ծագման և արժանիքների մասին: Եւսեբիոսի Եկեղ. պատմութեան մեր ձեռքը հասած գրչագիրների թիւը շատ սակաւ է: Երկու գրչագիր գտնուում են Վե-

նետկի Մխիթարեանների մատենագարանում, № 1606 և
750. սրանցից առաջինն է ծառայել իրեւ հիմք հ. ձար-
եանի հրատարակութեան։ Հաստատապէս յայտնի է նաև
միայն մէկ դրչագիր Վեննայի Մխիթարեանների մատե-
նագարանում, № 69, դրուած 1695 թուին, նոյն դրչի
ձեռքով, որ դրել է Վենետիկի № 750-ը։ Եւ որովհետև
Վեննայի դրչագիրը նոյն թերութիւններն է պարու-
նակում, ինչ որ Վենետիկի երկու դրչագիրները, ուստի
եղբափակել պէտք է, որ նրանք բոլորն էլ նոյն նախա-
տիսն են ունեցել*։ Հայերէն թարգմանութեան հարազատ
օրինակը վերականգնելու համար կարեոր նշանակութիւն
ունին այն հայ մատենագիրները, որոնք օգտուել են Եւսե-
բիոսի Եկեղ. պատմութեան հայերէն թարգմանութիւնից։
Այս ուղղութեամբ արդէն պրոֆ. Թետտեր մի դործ է
կատարել։ Նա համեմատել է Պողիկարապոսի վկայաբանու-
թիւնը՝ Եւսեբիոսի Եկեղ. պատմութեան (IV. 14), և հա-
յերէն վկայաբանութեանց մէջ** Über die armenische Ü-
bersetzung der Kirchengeschichte des Eusebius. Theol. Quartalschrift, 1881, եր. 250)։ — Պրօյշէն ինքն էլ համեմա-
տում է Արգարի նամակը, որ կայ Եւսեբիոսի (I, 13) և
Խորենացու (II, 31) պատմութեան մէջ։ Որ եւս, Եկեղ.
պատմ. հայերէն թարգմանութիւնը ասորերէնից է կա-
տարուած՝ երեսում է նոյն խոլ հարեւանցի համեմատու-
թիւնից։ Ի բայ առեալ ուրիշ շատ փաստեր՝ Պրօյշէն
մատնացոյց է անում յունական յատուկ անունների տա-
ռագարձութեան վերայ հայերէն թարգմանութեան մէջ,
որոնք աշկարայ սեմական են։ Պրոֆ. Ա. Մերքս (Merx)
արեելագէտների IV. համաժողովում 1879 թուին հաս-
տատել է իր կարծիքը, թէ հայերէն թարգմանութիւնը
ասորականից է կատարուած (ո. A. Merx, De Eusebianæ
historiae ecclesiasticae versionibus Syriaca et Armeniaca,—
Atti del IV congresso Internationale degli Orientalisti—մէջ)։

* Հմմտ. Տաշեանի ցուցակը, էջ 36։


** Հրատ. Վենետ. 1874, II. 233—238։

Florenz, 1880): Հայերէն թարգմանութիւնը միանդամայն ստրկական թարգմանութիւն է: Թարգմանիչն աշխատել է ամէն կերպ դործ դնել նոյն արտայայտութիւնն, ինչ որ ասորելէնումն է, առանց նոյն իսկ ուշադրութիւն դարձնելու հայերէն լեզուի ոգուն. այդպիսով թարգմանիչն իւր հնդեւրոպական լեզուին տուել է սեմական դոյն, ինչ պէս նկատում է Պրօյշէն:

Հայերէն թարգմանութեան հնութիւնն ու հաւատարմութիւնն են նրա գլխաւոր արժանաւորութիւնները:

Սակայն, ինչպէս երևում է, Պրօյշէն հայերէնին կարեոր չափով լաւ տեղեակ չէ: Անձառութիւններ և սխալներ պակաս չեն նրա թարգմանութեան մէջ. օր. եր. 4 «ի ձեռն դրոց» թարգմանում է—in eigenhändigen Schriften, փոխանակ—durch Schriften. եր. 5 ծոն. 1. «անուն անուանի» թարգմանում է—einen Namen des Namens, «անուանի» ընդունելով իրեւ սեռական «անուն» բառի.—եր. 10 die Wiederkunft des Nero, փոխանակ ծառական Ներոն, հայր Նեռինն, ընդունելով այս իրեւ սեռական Ներոն անուան, որ կլինէր սակայն Ներոնի, ելն:

Առ. Աքեղիան.



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Միջազգային Մատենադարան.—Լանգոնի թագաւորական ընկերութեան նախաձեռնութեամբ մի վերին աստիճանի շահագրգիռ և նշանաւոր դործի հիմք է դրուում—այն է ընական և մատեմատիկական գիտութեանց մատենադարաննի: Ամբողջ աշխարհայդ առարկաների վերաբերեալ ուսումնական դրականնութիւնը պէտք է մանի մատենադարաննի մէջ: 1901 թուից ընկերութիւնն արդէն սկսել է իւր գործունեութիւնը և ներ-